ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մարտի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-016-21.02.2019-ՊԻ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությանը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-016-21.02.2019-ՊԻ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ձեռնպահ մնալ գործող օրենսգրքում ներկայացված օրենքի նախագծով առաջարկվող լրացումը կատարելուց՝ ստորև ներկայացված հիմնավորմամբ.

Նախագծի համաձայն վարչական պատասխանատվություն է նախատեսվում Հայաստանի Հանրապետության կառավարության անդամների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության վարչապետին, Հայաստանի Հանրապետության նախարարություններին ենթակա պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների. համայնքների ղեկավարների և հանրային ծառայություն մատուցող մասնավոր ընկերության ղեկավարների կողմից պատգամավորի օրինական գործունեությանը խոչընդոտելու համար, որն արտահայտվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատգամավորին վերապահված իրավունքներն ապահովելուց հրաժարվելու, դրանք ապահովելուց խուսափելու կամ այդ իրավունքների ապահովման ուղղությամբ խելամիտ գործողություններ չձեռնարկելու կամ պատգամավորի գործունեությանը ցանկացած այլ եղանակով խոչընդոտելով:

Այս առումով հարկ է նշել, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 3-րդ, 12-րդ և 119-րդ հոդվածներով հստակ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների և մշտական հանձնաժողովների լիազորությունները: Այսպես, 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն պատգամավորն իրավունք ունի հարցումներով և առաջարկություններով դիմելու պետական և տեղական

ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց: Նույն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետը նույնպես սահմանում է մշտական հանձնաժողովի նմանատիպ իրավունքը: Նշված հոդվածով ամրագրված է նաև, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են երեքշաբաթյա ժամկետում քննարկել գրավոր հարցումը և գրավոր պատասխանել նրան: 119-րդ հոդվածի համաձայն պատգամավորներն ունեն Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներին գրավոր հարցեր ուղղելու իրավունք, և հարցն ստանալուց հետո երեքշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետը կամ նրա հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության անդամը գրավոր պատասխանում է հարցին:

«Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն իրավասու պաշտոնատար անձինք պարտավոր են երեքշաբաթյա ժամկետում քննարկել պատգամավորի գրավոր հարցումը կամ առաջարկը և գրավոր պատասխանել նրան, պատգամավորի բարձրացրած հարցի քննարկումը կազմակերպելու դեպքում հնարավորինս սեղմ ժամկետում տեղեկացնել նրան: Պատգամավորը հնարավորինս սեղմ ժամկետում ընդունելության իրավունք ունի Հայաստանի Հանրապետության կառավարության անդամների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության վարչապետին և Հայաստանի Հանրապետության նախարարություններին ենթակա պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների, համայնքների ղեկավարների կամ իր գրավոր հարցմանը, առաջարկին պատասխանելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց մոտ: Պատգամավորը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ներկա լինել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նիստերին:

Նշված հոդվածների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ նախագծով նախատեսված համապատասխան պաշտոնատար անձանց կողմից պատգամավորի օրինական գործունեությանը խոչընդոտելն արտահայտվելու է գրավոր հարցմանը չպատասխանելու կամ պատասխանելու երեքշաբաթյա ժամկետը խախտելու, պատգամավորի բարձրացրած հարցի քննարկումը կազմակերպելու դեպքում հնարավորին սեղմ ժամկետում նրան չտեղեկացնելու, պատգամավորի հնարավորին սեղմ ժամկետում ընդունելությունը չիրականացնելու, պատգամավորի ներկայությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նիստերին չապահովելու միջոցով:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 147-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության վարչապետից, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետերից և Հայաստանի Հանրապետության նախարարներից, և այդ տեսանկյունից պատահական չէ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, որի համաձայն հարցն ստանալուց հետո երեքշաբաթյա ժամկետում վարչապետը կամ նրա հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության անդամը գրավոր պատասխանում է հարցին: Այսինքն, տվյալ դեպքում խոսքը գնում է Հայաստանի Հանրապետության կառավարության պատասխանի մասին, և Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որպես գրավոր պատասխանը ներկայացնող մարմին, հանդես է գալիս որպես կոլեգիալ մարմին: Ուստի գտնում ենք, որ պատգամավորի օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքում խոսքը կարող է գնալ ոչ թե վարչական, այլ քաղաքական պատասխանատվության մասին: Այլ կերպ ասած՝ պատգամավորը կամ մշտական հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղված համապատասխան գրությամբ կարող է արձանագրել Հայաստանի Հանրապետության կառավարության

անդամի կամ այլ պաշտոնատար անձի կողմից պատգամավորի գործունեությանը խոչընդոտելու փաստերը, որի արդյունքում կարող է բարձրացվել պաշտոնատար անձի հետագա պաշտոնավարման հարցը:

Ինչ վերաբերում է հանրային ծառայություն մատուցող մասնավոր ընկերության ղեկավարներին, ապա դրանք նախատեսված չեն ինչպես «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 6-րդ հոդվածում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով: Այդ առումով նշված ձևակերպումը չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին:

Բացի դրանից, նախագծով առաջարկվող իրավախախտումն առաջարկվում է զետեղել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 5-րդ գլխում, որի վերտառությունն է «Քաղաքացիների իրավունքների և բնակչության առողջության դեմ ոտնձգող վարչական իրավախախտումներ»-ը, ինչը չի համապատասխանում նախագծի բովանդակությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2019 թվականի N 311 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արտակ Ասատրյանին նշանակել Ազգային ժողովում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-016-21.02.2019-ՊԻ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մարտի 28
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-016-21.02.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՀ օրենսգիրքը լրացնել 42^2 հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«*Հոդված 42^2 . Պատգամավորի օրինական գործունեությանը խոչընդոտելը*

Կառավարության անդամների, ինչպես նաեւ Կառավարության, վարչապետի, նախարարությունների երթակա պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների, համայնքների ղեկավարների եւ հանրային ծառայություն մատուցող մասնավոր ընկերության ղեկավարների կողմից պատգամավորի օրինական գործունեությանը խոչընդոտելը, որն արտահայտվել է ՀՀ օրենսդրությամբ պատգամավորին վերապահված իրավունքներն ապահովելուց հրաժարվելու, դրանք ապահովելունց խուսափելու կամ այդ իրավունքների ապահովման ուղղությամբ խելամիտ գործողություններ չձեռնարկելու կամ պատգամավորի գործունեությանը ցանկացած այլ եղանակով խոչընդոտելով՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Նույն արարքը, որը կատարվել է սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տուգանքի նշանակումից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 4-րդ կետի «պաշտպանի» բառից հետո ավելացնել «իսկ 42^2 -ով նախատեսված դեպքերում ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորի»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակ՝ման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանություն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման հիման վրա: ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով եւ համոզմունքներով: Հիմնական օրենքի 97-րդ հոդվածը սահմանում է, որ պատգամավորի գործունեության երաձխիքները սահմանվում են օրենքով:

ՀՀ ԱԺ պատգամավորրի գործունեության երաշխիքները սահմանվում են «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի օրենքով, որի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պատգամավորն իրավունք ունի հարցումներով եւ առաջարկներով դիմելու պետական կառավարման համակարգի մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին եւ դրանց պաշտոնատար անձանց:

2. Իրավասու պաշտոնատար անձինք պարտավոր են՝

1) երեքշաբաթյա ժամկետում քննարկել պատգամավորի գրավոր հարցումը կամ առաջարկը եւ գրավոր պատասխանել նրան.

2) պատգամավորի բարձրացրած հարցի քննարկումը կազմակերպելու դեպքում հնարավորինս սեղմ ժամկետում տեղեկացնել նրան:

3. Պատգամավորը հնարավորինս սեղմ ժամկետում ընդունելության իրավունք ունի Կառավարության անդամների, ինչպես նաեւ Կառավարությանը, վարչապետին եւ նախարարություններին ենթակա պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների, համայնքների ղեկավարների կամ իր գրավոր հարցմանը, առաջարկին պատասխանելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց մոտ:

4. Պատգամավորն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ներկա լինել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների նիստերին:»:

Իրավունքի տեսությունից հայտնի է, որ սուբյեկտիվ իրավունքների իրականացման երաշխիքների շարքում կարեւոր տեղ է զբաղեցնում հանդիպակաց սուբյեկտի կողմից իր պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, որով, փաստորեն, խոչընդոտվում է սուբյեկտիվ իրավունքի ռեալ կենսագործումը: ՀՀ գործող օրենսդրությամբ, մասնավորապես՝ ոչ ՀՀ Քրեական օրենսգրքով, ոչ էլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով որեւէ պատասխանատվություն նախատեսված չէ պատգամավորի օրինական գործունեությանը խոչընդոտելու համար, ինչի պայմաններում պատգամավորի կողմից իր լիազորությունների իրականացումը հաճախ է հանդիպում պրակտիկ խոչընդոտների:

ՀՀ Սահամանադրության 88-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովը՝ ի դեմս մշտական հանձնաժողովների, վերահսկողության է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ: Այս իմաստով խորհրդարանական վերահսկողության ինստիտուտի պատշաճ իրացումն ապահովելու նպատակով պատգամավորի գործունեության իրավական երաշխիքների շարքում կարեւոր է նրա գործունեությանը

խոչընդոտելու համար իրավական պատասխանատվություն նախատեսող իրավադրույթի առկայությունը ՀՀ օրենսդրությունում:

Ի դեպ, համանման նորմեր նախատեսված են նաեւ Աշխատողների ներկայացուցիչների համար (ՎԻՎՕ հոդված 41[1]), Մարդու իրավունքների պաշտպանի համար(ՎԻՎՕ հոդված 206[8]), Պրոբացիայի ծառայության համար (ՎԻՎՕ հոդված 206[10]), Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համար (ՎԻՎՕ հոդված 206[14]) եւ այլն:

Հաշվի առնելով պատժիչ քաղաքականության ժամանակակից մոտեցումները, ինչպես նաեւ հավանականորեն ենթադրվող արարքների հանրային վտանգավորության աստիճանը, կարծում ենք՝ ճիշտ է ենթադրվող արարքների համար վարչական ներգործության միջոցների կիրառումը: Այս իմաստով առաջարկվող լրացումը նախատեսում ենք կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում: